# Վերածնունդ

## Լեոնարդո դա Վինչի



*Անի Համբարձումյան 7.9 դասարան*

Բազմաթիվ պատմաբաններ և գիտնականներ Լեոնարդոյին համարում են «Բազմակողմանի հանճար» կամ «Վերածննդի ժամանակաշրջանի մարդ», «անսպառ հետաքրքրասիրության» և «եռանդուն ստեղծագործական երևակայության» տեր անհատ, և նա համարվում է երբևէ ապրած ամենատաղանդավոր անհատներից մեկը: Ըստ արվեստի պատմաբան Հելեն Գարդների՝ նրա հետաքրքրությունների մասշտաբը և խորությունը պատմության մեջ աննախադեպ էր, և «նրա խելքն ու անհատականությունը մեզ գերբնական են թվում, իսկ հենց ինքը՝ խորհրդավոր ու չչփվող»: Մարկո Ռոշին նշում է, որ թեև նրա կյանքի և անհատականության Լեոնարդոն ծնվել է նոտար Պիերո դա Վինչիի և մի գյուղացի կնոջ՝ Կատերինայի, արտամուսնական կապից, Ֆլորենցիայի Վինչի տարածաշրջանում: Նա կրթություն է ստացել նշանավոր ֆլորենտացի նկարիչ Անդրեա դել Վերոկիոյի ստուդիայում: Իր ստեղծագործական կյանքի մեծ մասն անց է կացրել Միլանում՝ Լյուդովիկո իլ Մորոյի մոտ աշխատելով: Հետագայում նա աշխատել է Հռոմում, Բոլոնյայում և Վենետիկում, իսկ իր կյանքի վերջին տարիներն անցկացրել է Ֆրանսիայում՝ Ֆրանսիայի Ֆրանցիսկոս Առաջինի կողմից իրեն նվիրած տանը:մասին կան բազմաթիվ ենթադրություններ, նրա աշխարհայացքը տրամաբանական է, քան խորհրդավոր, նրա օգտագործած էմպիրիկ (փորձային) մեթոդները իր ժամանակի համար ավանդական չէին:



Լեոնարդո դա Վինչին ծնվել է 1452 թվականին ապրիլի 15- ին Վինչի փոքրիկ քաղաքի մոտ գտնվող Անկիանո գյուղում, Ֆլորենցիայից ոչ հեռու «առավոտյան ժամը երեքին», (ժամանակակից ժամանակով ժամը 22:30-ին):Ուշագրավ գրառում Լեոնարդոյի պապի՝ Անտոնիո դա Վինչիի (1372-1468) օրագրում (բառացի թարգմանություն) <՝<Ծնվաց տղային անվանակոչել են Լեոնարդո: Նա մկրտվել է հայր Պիերո դի Բարտոլոմեոյի կողմից»: Նրա ծնողներն էին 25-ամյա Պիերոն (1427- 1504) և նրա սիրեկանը՝ գյուղացի կինը՝ Կատերինան:Կյանքի առաջին տարիները Լեոնարդոն անցկացրել է մոր հետ:Նրա հայրը շուտով ամուսնացավ հարուստ և ազնվական աղջկա հետ, բայց այդ ամուսնությունը անզավակ էր, և Պիերոն վերցրեց իր երեք տարեկան որդուն, որպեսզի նրան մեծացնի:Բաժանվելով մորից՝Լեոնարդոն ամբողջ կյանքն անցկացրեց՝ փորձելով վերստեղծել նրա կերպարը իր գլուխգործոցներում:Այդ ժամանակ նա ապրում էր պապիկի հետ:

# Լեոնարդոյի նկարները






Կզաքիսով տիկինը



Մոնա Լիզա



Խորհրդավոր ընթրիքը

Ավետում

